



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

5  
21.189

Կրկն.

Թ. ԹՈՐՈՄԱՆԵԱՆ

# ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԸ



Արասպուստ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ



ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ԿՈՒՆԻՍՏԱՆ  
ԵՐԵՎԱՆ

Թ Ի Յ Լ Ի Զ

ԷԼԵԲՏՐՈՆԱԳՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻՑ. 7.

1910

726+902.6  
Թ-82

ՔԻ  
37146




# ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԸ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ\*

Թ. Թօրամանեանի

(Նուէր պ. Սիմէօն Հայրապետեան Հախումեանին)



Զմիածնի տաճարը հայ ազգի իբրև դարաւոր հայրապետական աթոռ, բնականաբար գիտնականներու և բանասէրներու ուշադրութեան առարկայ պիտի դառնար մասնաւորապէս տաճարի շէնքը՝ որ աւանդաբար հայոց քրիստոնէութեան առաջին շրջանին կը վերագրուի Տրդատի և Ս. Գրիգորի ձեռքով շինուած 303 թուականին, այդ պատճառով ալ բացի պատմական ուսումնասիրութենէ, ճարտարապետական տեսակէտով ալ հետաքրքրական պիտի լինէր:

\*) Սոյն աշխատութիւնս առաջին անգամ լոյս տեսաւ ռուսերէն լեզուով Ռուսաց Կայսերական Հնագիտական ընկերութեան Записки Вост. отд. Импер. Русскаго Арх. Общ.-ի մէջ մեծ գիտական պ. Ն. Մառի թարգմանութեամբ. այժմ ալ հայերէն լեզուով հրատարակութեան համար, յարգելի գիտնականի միջնորդութեամբ մեր տրամադրութեան տակ զրուած են ռուսերէն թարգմանութեան համար պատրաստուած պատկերներու քիչէնքը, որուն փոխարէն կը յայտնեմ իմ խորին շնորհակալութիւններս: Այս առթիւ նախ պարտք կը համարիմ առանձին շնորհակալութիւն յայտնել մեծ. պ. Ն. Մառի՝ որ բարեհաճեց այս աշխատութեանս մէջ յիշատակածս պատմական վկայութիւններու ամբողջական հատուածները գնել իբրև ծանօթութիւն ռուսերէն թարգմանութեան մէջ, որով պիտի օգտուի ներկայ հայերէն հրատարակութիւնը:

Գրողարան  
ՄԱՐԿ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

94-99



(4621-91)

Շէնքի մասին պատմական շատ քիչ տեղեկութիւններ կան մինչև 7-րդ դարու կէսը. իսկ անկէ աստին մինչև 17-րդ դար գրեթէ բոլորովին մթուփեան մէջ թաղուած է:

Առաքել վարդապետ Դաւրիժեցի 17-րդ դարուն, իր նախորդներէն համեմատաբար քիչ աւելի մանրամասնութեամբ կը նկարագրէ թէ իրեն օրով տաճարին ունեցած աւերակ վիճակը և թէ Մովսէս կաթողիկոսի ու անոր յաջորդներու մէկ քանիին ձեռքով կրած նորոգութիւնները:

Իբրև հնագոյն եկեղեցի և հայրապետական աթոռ, սկսած 17-րդ դարէն գիտնական ճանապարհորդներու ուշադրութիւնը գրաւած է միշտ, որոնք աւելի կամ նուազ չափերով արձանագրած են իրենց տեսութիւնները և տպաւորութիւնները:

Առ հասարակ, քննողներէն ամենն ալ թեր ու դէմ ենթադրութիւններէ յետոյ, գրեթէ բացարձակապէս համաձայն են մի կէտի վրայ, թէ Էջմիածնի տաճարին յատկազօծի ձևն է միայն որ անփոփոխ պահուած է 4-րդ դարէն մինչև այսօր:

Ես ալ իմ կարգին ցանկացայ հետազօտել և մինչև այժմ եղած կարծիքները համեմատել շէնքին հետ, յուսալով որ թերևս յաջողուի ինծի ալ քայլ մը աւելի յառաջ երթալ դէպի ստուգութիւն:

1908 թուականին մարտ ամսոյ մէջ երբ Էջմիածին կը գլտնուէի, սկսեցի յատկապէս քննել շէնքի իւրաքանչիւր մասերու վրայ եղած նորոգութիւններն ու փոփոխութիւնները: Այս միջոցին ամենէն առաջ ուշադրութիւնս գրաւեցին հիւսիսային ճակատի դուրս ցցուած abside-ի երկու կողմի պատերու կատարին մօտ, երկու fronton-ներու հետքերը, որոնք պարբերաբար եղած կարկատաններու մէջ գրեթէ անյայտանալու վրայ էին: Այդ ներդաշնակութիւնը ինծի անմիջապէս յիշեցուց Անիի Առաքելոց եկեղեցիի արևելեան ճակատը 1) որ նմանապէս կազմուած է միջին մեծ և կողմնակի երկու փոքր fronton-ներով:

Յարգելի գիտնական մեծ. պր. Ն. Մառի աջակցութեամբ 1906 թուականին վերակազմեր էի Անիի Առաքելոց եկեղեցին, որովհետև փլատակները պեղելու և կորսուած մասերը ամբողջացնելու համար պ. Ն. Մառ հաճութեամբ դրաւ իմ տրամադրութեան տակ

1) Անիի Առաքելոց եկեղեցիի փոքր frontonները Էջմիածինին նման ամբողջ կողմնակի մասերը գրաւած չեն. երկու քովերէն փոքրիկ դատարկութիւններ թողուած կան, որոնք վրա frontonներէն ցած թեք տանիքներով ծածկուած են. սակայն այս տարբերութիւնը մեծ նշանակութիւն չի կարող ունենալ:

մշակներ, որով ես հնարաւորութիւն ունեցայ ըստ ամենայնի ամբողջացնել Առաքելոց եկեղեցիի պակաս բեկորները:

Տեսնելով Էջմիածնի տաճարին հիւսիսային ճակատի շատ մօտ նմանութիւնը Անիի Առաքելոց եկեղեցիի արևելեան ճակատի հետ, և այս երկու եկեղեցիներու յատկազօծի համանման յատկութիւնները, իսկոյն զգալի եղաւ Էջմիածնի տաճարին չորս պատերէն դուրս ցցուած abside-ներու անպատշաճութիւնը և անհարազատութիւնը: Այս համոզումս աւելի մեծ հաստատութիւն գլտաւ երբ նկատեցի absideներու քարերուն՝ թէ չափերով և թէ որակով կողմնակի պատերու քարերէն ունեցած մեծ տարբերութիւնները: Համոզուեցայ նաև որ նախնական ձևին վրայ գաղափար կազմելու համար ստուգագոյն և դրական ապացոյցներ գլտանելու ժամանակը դեռ չէր անցած, մանրամասն և լուրջ քննութիւնները կարող էին նոր լուսաբանութիւններ ընծայել մինչև այժմ մութ մնացած կէտերուն:

Ի նկատի ունենալով մանաւանդ այն հանգամանքը որ շուտով վերանորոգութեան համար պիտի քանդուէր շէնքը, պէտք էր շտապել ժամ առաջ արձանագրել անոր հին ձևերը ապացուցանող կարևոր մասերը, որոնք գուցէ ոչնչանային առանց գիտական հետազօտութեան ենթարկուելու:

Այս խնդիրը հրապարակի վրայ դնելով միևնոյն ատեն անկեղծ ցանկութիւն պիտի յայտնեմ, որ շէնքը քանդուելու ժամանակ, հսկող արուեստագէտներու կողմէ ուշադրութիւն դարձնուի այն մասերուն վրայ, որոնք իմ այժմեան ենթադրութիւններս հաստատուելու կամ հերքելու պիտի ծառային:

Թէև ինքզինքս առաջինը կը կարծէի այս հետաքրքրական երևոյթը նշմարող, սակայն յետոյ տեսայ, որ ինձմէ շատ առաջ Ստչիգովսկիի ըսելով Տիւպուա նկատեր և գծագրեր է մի պատկեր իբրև հին ձև Էջմիածնի տաճարին արտաքին ճակատին, որն որ բաւական տարբեր է այսօրուան ձևէն 1): Հայր Ալիշանի Այրարատի երես 214 հին ձև կամողիկէին Էջմիածնի խորագրով 84 պատկերը ընդօրինակուած է Տիւպուաի գծած պատկերէն 2):

1) Chardin-ը նոյնպէս Էջմիածնի իւր նկարի վրայ ցոյց է տուել փոքրիկ fronton-ներից մինը, որ մնացել է յետագայ շինուածքի տակ, այն է տաճարի հարաւային կողմի արևմտեան ծայրում, (Voyages du chevalier Chardin en Perse, հրատ. Langes, Atlas, pl. X) սակայն այստեղ սրանց նշանակութիւնը չի բացատրուում: Ծան. ուսերէն թարգմ.

2) Dubois de Montpéroux, Voyage autour du Caucase, Paris, 1839 Atlas, sér. III. pl. VII, fig. 1. ծան. ուս. թարգմ.

Որչափ որ Ստշիգովսկի 1) Տիւպուայի այդ պատկերը կամայական կը գտնէ և անոր կարծիքը կը քննադատէ, այնուամենայնիւ հանդէպ Տիւպուայի բանաւոր և իրական տեսութեանց՝ Ստշիգովսկիի քննադատութիւնը միանգամայն անտեղի կը մնայ:



Պատկ. Ա. Էջմիածնի տաճարը՝ հիւսիսային կողմից:

Որովհետև, գուցէ ինքը չէ տեսեր այն բոլոր մնացորդները, որոնք խոր հնութիւն կապացուցանեն և թէ զուտ հոռմէական ոճի նկարագիրն ունեն, որոնց վրայ հիմնուելով Տիւպուա կազմեր է իր կարծիքներն ու շէնքին հին պատկերը 2):

Յայտնի է, որ Տիւպուա յատակագծի ուսումնասիրութիւնով չէ զբաղուած, զինքը հետաքրքրեր են միայն faÇade-ի մանրամասնութիւնները, այդ պատճառով ալ նա միայն հին faÇade-ը

1) Strzygowski, Das Etschmiadzin-Evangeliar, Wien. 1891. Էր 3. ծան. ուս. թարգմ.  
2) Dubois de Montpéreux յ. գ. 5. III Էրես 371.

վերակազմեր է ընդունելով միևնոյն ատեն որ չորս կողմէն դուրս ինկած abside-ները ևս այնչափ հին են որչափ տաճարի սկզբնական շինութիւնը 1):

Պէտք է խոստովանեմ որ եթէ ես նախապէս Առաքելոց եկեղեցիի հետադասութեամբ զբաղած չի լինէի, հազիւ թէ ես ալ, բացի faÇadeէն, յատակաձևին վրայ ևս այնքան լուրջ ուշադրութիւն դարձնէի ինչպէս այժմ:

Իսկզբան Էջմիածնի տաճարը արտաքուսա ունեցեր է պարզ ուղղանկիւն քառակուսի ձև՝ առանց դուրս ցցուած absideներու, ասոր ապացոյցներէն մէկը, ինչպէս վերև նկատեցի, քարերու շարուածքին և որակին միւս պատերուն հետ ունէ կապ չունենալն է. մէկ նայուածքով կարելի է տեսնել այդ տարբերութիւնը նոյն իսկ լուսանկարին վրա (պատկ. Ա. և Բ.): Բացի այս տարբերութիւններէն կայ մի ուրիշ բնորոշ երևոյթ ևս. հարաւային ճակատի abside-ին անմիջապէս յաջորդող պատուհաններուն archivolt-ները մնացիւր են մասամբ abside-ի յետնազոյն շինուածքի ետևը (պատկ. Բ. 1, 2): Նոյն բանը պատահեր է նաև հիւսիսային ճակատի վրայ մտից դրան արևելակողման պատուհանին (պատկ. Ա. 3):

Կը թողում այժմ ուրիշ մանր մունր ապացոյցներ և պիտի քննեմ ճարտարապետական ու շինարարական տեսակէտով այն մասերը, որոնք անվրէպ ընդունուած օրէնքներ էին հայոց մէջ և թէ անոնցմէ մեծ մասը տակաւին օրէնք է ներկայ ճարտարապետական արուեստի մէջ:

Տաճարի ներքին կողմէն, առանց absideներու խորութեան, արևելքէն արևմուտք ամբողջ երկայնութիւնն է 22,55 մետր. իսկ լայնութիւնը հիւսիսէն հարաւ, նոյնպէս առանց absideի խորութեան 20,72 մետր: Արևելքէն արևմուտք ձգուող երկայնութեան վրայ աւելցնելով արևելեան և արևմտեան ճակատներու պատի թանձրութիւնները, արևելքէն 80 սնթ. 2) արևմուտքէն 1,15 մետր հիւսիսային ճակատի արտաքին երկայնութիւն կունենանք  $22,55 + 80 + 1,15 = 24,50$ : Նոյնպէս լայնութեան վրայ աւելցնելով պատերու թանձրութիւններ  $20,72 + 1,15 + 1,15 = 23,02$  կունենանք արևելեան և արևմտեան ճակատներու արտաքին երկարութիւն:

1) յ. գ. Atlas, ser. III—VII fig. 1 ծան. ուս. թարգմ.

2) Տաճարը արևելակողմի քառակուսի աւանդատունէն բաժնող պատի թանձրութիւնը ոչ թէ 80 սնթ. է այլ 1,32. բայց ինչպէս պիտի տեսնուի քիչ յետոյ, քանի որ երկու շինութիւնները

Նախապէս պէտք է գիտնալ որ յաճախակի նորոգութիւններու և անկանոն կարկատաններու մէջ, տաճարին արևելքէն արևմուտք երկայնութիւնը ճշդիւ որոշող մի նշան մնացած է, այն է շէնքին երկայնութիւնը վերջանալէն անմիջապէս յետոյ մի



Պատկ. Բ. Էջմիածնի տաճարը՝ հարաւային կողմից

ուրիշ շինութեան սկզբնաւորութիւնը, այս երկու շինութեանց կցուածքի գիծը նկատելի է բարձրէն: Երկրորդ շինութիւնը ա-

իրարմէ բաժնող գծին ուղղութիւնը կանցնի 80 սնթ. թանձրութիւն թողելով տաճարին կողմը, այդ պատճառով ալ 80 սնթ. հաշուեցի. յայտնի բան է որ այժմեան 1,32 սնթ. թանձրութիւնը յետնագոյն նորոգութիւններու արդիւնք է:

Այս առթիւ պէտք է ըսեմ նաև, որ տղէտ արհեստաւորներու ձեռքով անընդհատ հղած նորոգութիւններու պատճառաւ, այնպիսի ծուռութիւններ և անկանոնութիւններ յառաջ հկեր են շէնքին ամեն կողմին վրայ, որ գրեթէ անհնար է ուղիղ չափել և գծել առանց միջին ճանապարհը ընտրելու. պատկ. Ժ-ի վրայ գրուած իսկական չափերէն կարելի է եզրակացնել, թէ ոչ մի համեմատական ուղիղ չափ չէ մնացած. նոյն իսկ տաճարին երկայնութիւնը հարաւային կողմէն 40 սնթ. երկայն է:

ւելի ցած է տաճարէն, որուն բովանդակ ճակատը պսակող frontonին սկիզբը միայն մնացած է տաճարի արևելեան կողմի անկիւնին կից. (պատկ. Ա. 4): Միւս կողմն անջատման գիծը կերևայ նաև հարաւային ճակատին վրայ (պատկ. Բ. 6): Այս մնացորդները կապացուցանեն, որ տաճարին արևելեան կողմին կից, անոր բովանդակ լայնութեան հաւասար գոյութիւն ունեցել է մի ուրիշ շինութիւն՝ որը մի ժամանակ քանդուելով տաճարին կից մի մասը մնացեր է. նորոգութեան ժամանակ օգտուել են նոյն պատի մնացորդներէն և կազմել են այժմեան խորանի երկու կողմի քառակուսի սենեակները, որոնք կը ծառայեն իբրև աւանդատուն: (պատկ. Գ. 1,1): Աւանդատուներու մէջ գտնուած պատուհանները անտարակոյս ի հնուսն կը վերաբերէին յարակից շինութեան: Սոյն յարակից շինութիւնը դատելով իր frontonի թեքութեան աստիճանէն և զբաւած դիրքէն պէտք էր որ բաւական լայնութիւն ալ ունենար: Ի՞նչ բանի էր ծառայած այդ շէնքը, իհարկէ չէ կարելի հաստատ գիտնալ, միայն թէ երկու եզրակացութիւններ պիտի հանեմ, որոնցմէ մէկը դարձեալ իբրև ապացոյց պիտի ծառայէ այժմեան absideներուն յետնագոյն ժամանակի մէջ արտաքին պատերէն դուրս հանուած լինելուն:


Որչափ խորութիւն և ի՞նչ ձև ալ որ ունենար տաճարի ամբողջ լայնութեան հաւասար այս յարակից շէնքը, անոր մէջ մեծ անտեղութիւն և անյարմարութիւն պիտի ներկայացնէր տաճարին արևելեան absideին դուրս ցցուելը. ուստի պարզ է որ յարակից շինութիւնը քանդուելէն յետոյ է որ դուրս հանուած են abside-ները առանց ունէ անտեղութեան պատճառ տալու:

Միւս եզրակացութիւնս, շատ վերապահութեամբ սակայն, պիտի կապեմ էջմիածնի Իւլքիլիսէ անուանելու աւանդութեան հետ. ենթադրելով որ թերևս արևելեան կողմէն կային երկու ուրիշ մատուռներ եւ, որոնց մէկուն ճակատի մնացորդն են այսօրուան երեցած frontonի կտորը և տաճարի կից պատի մնացորդները:

Չգիտեմ որչափ հաւանական վկայութիւն կարելի է համարել Տեկտանդերի գրածը այս մասին, որնոր այնտեղ կուզէ տեսնել երեք եկեղեցիներ, որոնցմէ մէկը միայն կանգուն էր իր այցելութեան ժամանակ: Արդեօք տեսաւ այդ մատուռներու մնացորդներէն այն ժամանակ, որ ըստ Առաքել վարդապետ Դաւրի-ժիցիի վկայութեան, եօթը կանգուն բարձրութեամբ փլատակներ կային տաճարին շուրջը: Թէև Տեկտանդերի այցելութեան ժամանակ այդ շինութեան գոյութիւնը հաւանական չեմ կարող համարել՝ քանի որ absideները աւելի հին ժամանակ դուրս հանուած լինելու փաստեր շատ կան:

Ոմանք կը կարծեն որ Իւջքիլիսէ անունը ստացած է Հռիփսիմէի եւ Քայիանէի տաճարներու Էջմիածնի անմիջապէս մօտ գտնուելուն պատճառով, սակայն այս կարծիքը ամենեւին հաւանական չէ, որովհետեւ եթէ Հռիփսիմէի եւ Քայիանէի տաճարները Էջմիածնի տաճարին հետ կապել հարկ լինէր, պէտք էր որ միեւնոյն աւանդութիւնով սրբազործուած ժամանակակից Հողակաթն ալ միացուէր անոնց, ահա այն ատեն ալ փոխանակ երեքի՛ չորս պիտի լինէին: Ըստիս անպայման պէտք է ընդունել որ Մայր տաճարին արեւելեան կողմի կցուած շինութիւնը երկու ուրիշ մատուռներ էին եւ անոնցմով ծագում առած է աւանդական Իւջքիլիսէ անունը:

Այս միջանկեալ նկատողութենէն յետոյ անցնենք դարձեալ բուն տաճարի հետազօտութեան:



Պատկ. Գ. Այժմեան Էջմիածնի մակարդակը:

Ըստ շինարարական օրէնքի, եթէ տաճարի հիւսիսային պատի բովանդակ երկայնութիւնէն զեղջենք փոքր frontonներու գրաւած լայնութեան չափերը  $7,03 + 7,03 = 14,06$  (պատկ. Ա. 7,8) (պատկ. Գ. 1,1....) մնացորդ 11,14 լայնութիւնը ամեն կողմի միջին մեծ frontonներուն լայնութեան չափը ներկայացընելէն դատ,

նաև կորոշէ գմբէթի խարիսխի տրամագծին 1) իսկական սահմանը. որովհետև այս լայնութիւնն է որ տանիքի միջոցաւ հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտ երկնաւալով խաչաձևուելէն յետոյ (պատկ. Գ. 2,2...) մէջտեղը կազմուած քառակուսիին վրայ միայն կը հանգչի գմբէթը (պատկ. Գ. 3,3...): Այս լայնութեան մէջ կը գտնուի նաև frontonները կազմող պատերուն թանձրութիւնները: (Պատկ. Գ. 4,4): Հետևաբար տաճարի մէջ գմբէթակիր մեծ սիւներու դասաւորութեան սահմանն ալ պիտի լինի այս 11,14 լայնութեան մէջ (պատկ. Գ. 5,5...)


Պատկեր Գ. 1,1... թուանշանները կէտաշար գծերու վրայ frontonներու տանիքներուն զիրար խաչաձևող ընթացքը ցոյց կուտան. ուրեմն այս հաշուով գմբէթի խարիսխն ալ պէտք է որ 11,14 լայնութիւն կամ տրամագիծ ունենայ, որով կստացուի մօտաւոր համեմատական չափ հայկական ոճի լայնանիստ գմբէթներու հակառակ այժմեան զգալի կերպով նեղցած տրամագծին: Այս անվիճելի կանոնին հետ համեմատելով այսօրուան խառնաշփոթուած մասերը, պարզ կը տեսնուի որ ոչ միայն տաճարին դուռը, այլև ներսն ալ մեծամեծ փոփոխութիւններու ենթարկուել է:

Եթէ մենք ի ձեռին չունենայինք արուեստագիտական այս անվրէպ ապացոյցը, դարձեալ մեզ նկատելի պէտք էր լինէր մի ուրիշ բնորոշ հանգամանք, այն է ներքին գմբէթակիր մեծ սիւներու դասաւորութեան կապը, որոնք կը ղեկավարուին միշտ գմբէթի տրամագծով և միջին մեծ frontonներու տանիքներու խաչաձևումով: Արդ այժմ կը տեսնենք որ այդ գմբէթակիր չորս մեծ սիւներու դասաւորութիւնը (պատկ. Գ.) ոչ միայն հայկական ոճի չի պատկանէր մինչև 17—18-րդ դարերը, այլև ուրիշ բնատոնեայ ազգաց եկեղեցիներու մէջ ալ հազիւ թէ պատահած լինի նոյնօրինակ դասաւորութիւն, այսինքն երեք nefերը հաւասար լայնութեամբ:

Այս մասին ևս շատ սխալ է Ստչիգովսկիի կարծիքը, երբ գայն «Յուստինիանու ժամանակ գործածուել սկսող բիւզանդա-

1) Հիւսիսային ճակատի արեւելեան փոքր fronton-ը միայն չափելու հնարաւորութիւն ունենալու համար, բոլոր տեսութիւններս հիմնած եմ անոր չափերուն վրայ. պէտք է ըսել որ absideի կողմի վերջաւորութիւնը անորոշ է. հանդիպակաց կողմի փոքր fronton-ը աչքով այնպէս կիրևայ, թէ քիչ աւելի լայն է. եթէ այդպէս լինի, ենթադրութիւններէս ոչինչ չի փոխուելէն դատ, հետևանք այն կը լինի որ ներքին գմբէթակիր սիւներ իրարու աւելի մօտենալով, գմբէթի տրամագիծն ալ քիչ կը փոքրանայ և ճիշտ Անիի Առաքելոց եկեղեցիի չափերուն կը հաւասարի:

կան զմբէթաւոր եկեղեցեաց առաջին կաղապարին նման» կը համարի. մինչդեռ Այս Սօֆիան, որ մայրն է բիւզանդական զմբէթաւոր եկեղեցիներու, այս համեմատական դասաւորութեան է նաև շատ հետու է, և կողմնակի զգալի կերպով նեղցածոսներ ունի:



Հայոց եկեղեցիներու մէջ աւելի շատ շեշտուած է միջին սնդերու լայնութիւնը քան բիւզանդական եկեղեցիները, ինչպէս Տիկոր, Մըրեն, Անիի մայր եկեղեցին, որոնք անհամեմատ նեղ կողմնակի թևեր ունին, և այդ իսկ պատճառով ալ միշտ լայնասիւս եղած են հայոց եկեղեցիներու զմբէթները: Անիի մայր եկեղեցին, որուն լայնութիւնը աւելի է քան էջմիածնի տաճարը, ներքին զմբէթակիր մեծ սիւները այնքան մօտ դրուած են հիւսիսային և հարաւային պատերուն՝ որ մի օր, նորոգութեան մը ժամանակ ստիպուեր են որմասիւններու խարխիսի յառաջակարկառ moulureներէն մէկ մասը տաշել անցքը լայնցընելու համար \*):

Հետեւելով նոյն իսկ նախապէս գտնուած 11,14 միջին լայնութեան չափերուն, որոնց խաչաձևումէն յառաջ եկող քառակուսին projection-ը գետնի վրայ կուտայ թէ սիւներու մէկգմէկէ և թէ իրենցմէ դէպի պատը եղող հեռաւորութեանց չափը, դարձեալ միջին թևը՝ հայկական եկեղեցիներու համաչափութեանց հակառակ խիստ նեղ է:

Այս արտասովոր երևոյթը լուսաբանելու համար, նախ ի նկատի ունեցայ հին պատերու քառակուսի շրջանակին մէջ, այսօրուան սիւներու դասաւորութեամբ զմբէթաւոր մի եկեղեցի՝ առանց կողմնակի absideներու, և արևելեան abside-ը պատէն ներս ամփոփուած, բայց այս նկատումը շատ անհեթեթ արդիւնք տուաւ. abside-ի բերանը կը հասնէր և գրեթէ կը միանար արևելեան կողմի զմբէթակիր սիւներուն և երկու քովերը կը թողէր խորութիւններ իբրև խորշ, որոնք բոլորովին օտար էին քրիստոնէական եկեղեցիներու. իսկ մնացած մասն ալ հիւսիսէն հարաւ աւելի լայն քան արևելքէն արևմուտք երկայն սրահի մը ձևը կստանար: Այս անյարմարութեան առջև կը մնար միայն ենթադրել թէ գուցէ արևելեան կողմէն միայն խորանի abside-ը դուրս հանուած էր, սակայն այս ալ անկարելի էր նախ վերը յիշուած պատճառներով, յետոյ ալ բոլորովին հակառակ էր հայոց եկեղեցիներու յատկազգծային ոճերուն, որոնց մէջ ընդհանրապէս absideները ծածկուած են արևելեան պատէն ներս: Թէև կան իբրև բացառութիւն դուրս ընկած արևելեան abside-ով եկեղեցիներ, ինչպէս Տիկորի, Մըրենի, Քասաղի եկեղեցիները, սակայն ասոնց ամենն ալ ըստ իս ընտելութեան կարօտ են, շատ պատճառներ կան համոզուելու, որ անոնք յետնագոյն յաւելուածներ են: Թաւրի Ս. Աստուածածին \*\*) եկեղեցին վրայ պարզապէս յայտնի է որ կողմնակի բոլոր absideները յետոյ են աւելցուած, հաւանականաբար 10-րդ դարաշրջաններուն կամ աւելի յետոյ: Ուստի պէտք էր որ ընդունէինք արևելեան abside-ը անպայման արևելեան պատէն ներս և աշխատէինք միւս մասերուն վրայ յառաջ եկած անյարմարութիւններուն պատճառները փնտռել: Արդ վերստին հարկ կը լինէր զիմել Անիի Առաքելոց եկեղեցին և

տերուն՝ որ մի օր, նորոգութեան մը ժամանակ ստիպուեր են որմասիւններու խարխիսի յառաջակարկառ moulureներէն մէկ մասը տաշել անցքը լայնցընելու համար \*):

Հետեւելով նոյն իսկ նախապէս գտնուած 11,14 միջին լայնութեան չափերուն, որոնց խաչաձևումէն յառաջ եկող քառակուսին projection-ը գետնի վրայ կուտայ թէ սիւներու մէկգմէկէ և թէ իրենցմէ դէպի պատը եղող հեռաւորութեանց չափը, դարձեալ միջին թևը՝ հայկական եկեղեցիներու համաչափութեանց հակառակ խիստ նեղ է:

Այս արտասովոր երևոյթը լուսաբանելու համար, նախ ի նկատի ունեցայ հին պատերու քառակուսի շրջանակին մէջ, այսօրուան սիւներու դասաւորութեամբ զմբէթաւոր մի եկեղեցի՝ առանց կողմնակի absideներու, և արևելեան abside-ը պատէն ներս ամփոփուած, բայց այս նկատումը շատ անհեթեթ արդիւնք տուաւ. abside-ի բերանը կը հասնէր և գրեթէ կը միանար արևելեան կողմի զմբէթակիր սիւներուն և երկու քովերը կը թողէր խորութիւններ իբրև խորշ, որոնք բոլորովին օտար էին քրիստոնէական եկեղեցիներու. իսկ մնացած մասն ալ հիւսիսէն հարաւ աւելի լայն քան արևելքէն արևմուտք երկայն սրահի մը ձևը կստանար: Այս անյարմարութեան առջև կը մնար միայն ենթադրել թէ գուցէ արևելեան կողմէն միայն խորանի abside-ը դուրս հանուած էր, սակայն այս ալ անկարելի էր նախ վերը յիշուած պատճառներով, յետոյ ալ բոլորովին հակառակ էր հայոց եկեղեցիներու յատկազգծային ոճերուն, որոնց մէջ ընդհանրապէս absideները ծածկուած են արևելեան պատէն ներս: Թէև կան իբրև բացառութիւն դուրս ընկած արևելեան abside-ով եկեղեցիներ, ինչպէս Տիկորի, Մըրենի, Քասաղի եկեղեցիները, սակայն ասոնց ամենն ալ ըստ իս ընտելութեան կարօտ են, շատ պատճառներ կան համոզուելու, որ անոնք յետնագոյն յաւելուածներ են: Թաւրի Ս. Աստուածածին \*\*) եկեղեցին վրայ պարզապէս յայտնի է որ կողմնակի բոլոր absideները յետոյ են աւելցուած, հաւանականաբար 10-րդ դարաշրջաններուն կամ աւելի յետոյ: Ուստի պէտք էր որ ընդունէինք արևելեան abside-ը անպայման արևելեան պատէն ներս և աշխատէինք միւս մասերուն վրայ յառաջ եկած անյարմարութիւններուն պատճառները փնտռել: Արդ վերստին հարկ կը լինէր զիմել Անիի Առաքելոց եկեղեցին և

\*) Յիշ. գ. եր 5.

\*\*) Տէր Մովսիսեան էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ (Աղգ. Հանդ. գ. XVI. տախտ XXI).

Պատկ. Դ. Էջմիածնի սկզբնական մակարդակը եւ ճակատը՝ հիւսիսից:



անոր յատակագծին հետ համեմատելով լուծել հանգոյցը (պատկ. Ե), որուն համաչափական ուղղութիւնները և յարամասունքները իրագործելով էջմիածնի տաճարի պատերու սահմանին մէջ կըստանանք պատկ. Դ. յատակագիծը, որը ոչ միայն ընդհանուր տըպաւորութեամբ կը համապատասխանէ Առաքելոց եկեղեցիին յատակագծին, այլև վերին աստիճանի պատշաճութիւն և համանութիւն կատանայ նաև չափերով (պատկ. Դ.):

էջմիածնի տաճարին արտաքուստ երկայնութեան չափն էր 24,50 և լայնութիւնը 23,02 որով կը տեսնենք թէ ուղիղ հաւասարակողմ քառակուսի չէ շէնքը, արևելքէն արևմուտք 1,48 մետր աւելի երկայն է:


Առաքելոց եկեղեցիի երկայնութիւնը արևելքէն արևմուտք 21,64. լայնութիւնը 19,68 մետր, ասոնց տարբերութեան է 1,96 մետր: Ուրեմն աննշան տարբերութեամբ էջմիածնի տաճարի համաչափութիւնը պահուած կը տեսնենք Առաքելոց եկեղեցիի մէջ 1): Ուստի վերև կատարուած թէ շինարարական և թէ եկեղեցական ճարտարագիտութեան քննութիւններէ յետոյ, երբ չափերու մէջ ալ շատ մօտ նմանութիւն կը գտնուի էջմիածնի տաճարի և Առաքելոց եկեղեցիի մէջ, այն ատեն մի քիչ աւելի համարձակօրէն կարելի կը լինի ըսել, թէ էջմիածնի տաճարը, իսկզբան Վահան Մամիկոնեանի օրով կառուցուածը, եղած է Անիի Առաքելոց եկեղեցիի նման, ի ներքուստ խաչաձև կիսաբոլորակ վերջաւորուած թևերով, և արևելքէն արևմուտք փոքր չափով երկայն քան հիւսիսէն հարաւ, ինչպէս պատկ. Ե. և պատկ. Ը:

Որպէսզի աւելի ապահով համարուի սոյն եզրակացութեան ստուգութիւնը, ես պիտի ներկայացնեմ նաև հետևեալ փաստերը, որոնք ոչ նուազ դրական են համոզումներս հաստատելու համար:

Առհասարակ հայոց եկեղեցիներու մէջ կիսաբոլորակ abside-ները իրենց շառաւիղի երկայնութենէն աւելի խոր են, այս համեմատութեամբ ալ երբ 11,14 մետր լայնութեան մէջ պատերու թանձրութիւնը թողելէ յետոյ կիսաբոլորակը կը գծենք, կտտանանք ուղիղ համաչափութիւն խաչաձև եկեղեցիի abside-ներու ալ պատշաճ խորութեամբ. միայն մի քիչ կը նեղնայ գմբէթին տրամագիծը այս գործողութեամբ և այս ալ ընական երևոյթ է բոլոր խաչաձև եկեղեցիներու մէջ. եթէ խաչաձևի պահանջը չի լինէր, անպայման պէտք էր որ ներքին գմբէթակիր սիւները

1) Անիի Գազկաշէն ս. Գրիգորը, որ ուղիղ ընդօրինակութիւն է Չուարթնոց եկեղեցիի, բացի զանազան ակամայ տարբերութիւններէ՝ տրամագիծն ալ 60 սնթ. տարբերութիւն ունի:

իրարմէ աւելի հեռու և արտաքին պատերուն աւելի մօտիկ դրուէին ըստ հայկական ոճի անհրաժեշտ պահանջի, որով թէ գրմբէթին տրամագիծը պիտի մեծանար սովորական ուղղանկիւն եկեղեցիներու գմբէթներուն նման և թէ միջին fronton-ը պիտի լայննար աւելի քան 11,14:



Պատկ. Ե. Անիի ս. Առաքելոց եկեղեցու մակարդակը:

նոյն տեղերուն վրայ մտից դռներ առանց բացառութեան մենք չենք կրնար գտնել բոլոր հայոց եկեղեցիներու մէջ, մանաւանդ անոնց չափերու փոքրութիւնն ալ ապացոյց է որ գըլխաւոր դռները չէին, այլ չորս անկիւնի չորս սենեակներու դռները: Հարաւային ճակատին վրայ այսօրուան գործածական եզոդ դրան կատարեալ համաչափութեամբ զետեղուած է հանդիպակաց անկիւնի մօտ փակուած դուռը (պատկ. Բ. 7) որնոր կը բացուի ուղղակի արևելեան հարաւային սենեակի վրայ. կասկած չիկայ որ հիւսիսային կողմէն ալ դէմ առ դէմ գտնուած սենեակին մէջ որ կար այս դուռը, բայց փոփոխութեանց ժամանակ գոցուած է ալ բոլորովին: Օրինական կերպով անկասկած գլխաւոր դռները բացուած էին շէնքի երեք ճակատներուն վրայ ճիշտ մէջ տեղերէն, ինչպէս միւս բոլոր հայկական եկեղեցիները. և սա այնպիսի անբռնաբարելի պահանջ էր որ նոյնիսկ 7-րդ դարէն սկսեալ մեզ հասած արտաքուստ շեշտուած abside-ներով խաչաձև բոլոր եկեղեցիներուն վրայ մտից գլխաւոր դռները բացուած են դարձեալ մէջտեղէն, այսինքն abside-ներու կեդրոնէն (պատկ. Դ. յտկգիծ):

Ուստի շատ պարզ է որ absideներուն դուրս հանուելու ժամանակը երբ քանդուեցան ներսի հին absideները, քանդուեցան նաև դռները և օգտուելով սենեակներու դռներէն աւելորդ համարուեցաւ նորոգ յաւելուած absideներուն վրայ դռներ բացուելը, նոյնպէս աւելորդ էր հարաւային ճակատի վրայ դէպի արևելեան անկիւնի մօտի դուռը՝ որ շատ անպատշաճ կերպով սեղանին մօտ կը բացուէր՝ սենեակները ևս abside-ներուն հետ քանդուելէ յետոյ (պատկ. 7):

Էջմիածնի տաճարին մէջ չորս անկիւնի սենեակները թէև իրենց պարզութեամբ կը տարբերին Ասիի Առաքելոց եկեղեցիի խորանագարդ ձևերէն, սակայն այս յատկութիւնը ամենևին չի փաստեր ենթադրութեանս հաւանականութեան, որովհետև նախքան 10-րդ դար հայոց եկեղեցիներու մէջ ամենևին չիկան abside ունեցող կողմնակի սենեակներ, եթէ գտնուին ալ, պէտք է համարել որպէս յաւելուած 10-րդ դարու. Ասիի Առաքելոց եկեղեցւոյ հետ կարելի է միաժամանակ շինուած ընդունել նաև կողմնակի սենեակներու absideները, որովհետև անոր շինութեան ալ ամենահաւանական ժամանակն է 10-րդ դարը:

Էջմիածնի տաճարին մէջ ի՞նչ բանի կը ծառայէին արևմտեան կողմի սենեակները, այդ բանը թող բացատրեն Երեւոյքի, Հոփսիմէի և այլ նմանը ունեցող տաճարներ, իմ կարծիքս այն է որ, այդ սենեակները հայոց նախնական եկեղեցիներու մէջ թերևս ծառայած են իբրև հեթանոսական գաւիթներ, քանի որ արևմտեան եկեղեցիներու նման, հայերը այդ խորհուրդին համար որոշ բաժին չունին իրենց եկեղեցիներու մէջ: Այս կարծիքը կը յայտնեմ իմ ծննդավայրիս Շապին-Գարահիսարի և շրջակայից մէջ տարածուած աւանդութեան մը վրայ հիմնուած: Ինչպէս Փոքր Ասիոյ շատ կողմերը, նոյնպէս և Շապին-Գարահիսարի մէջ կայ մի եկեղեցի ս. Աստուածածին անունով, որուն արևմտակողման այդ բաժինները, փոխանակ զոց պատի, վանդակորմով անջատուած են տաճարէն, և յատակով ալ բարձր են երկու աստիճան քան տաճարին յատակը. այդ բաժիններուն ժողովուրդը աւանդաբար պէյնամազ (պի նա մազ) սէրիւսի անունը կուտայ, այսինքն անաղօթքներու կամ աղօթքէ զրկուածներու գաւիթ: 1)

Գուցէ առարկուի թէ արտաքուստ դուրս հանուած abside-ներով խաչաձև եկեղեցիներ սովորական եղած են հայոց մէջ և բաւական թուով օրինակներ ալ մեզի հասած են, ինչպէս Մաս-

1) Սէքի բառը թուրքերէն է. համապատասխան բառ հայերէն չեմ կարողացած գտնել, գաւիթ չի նշանակիր, աւելի մօտ իմաստը կուտայ plate-forme բառը:

տարա, Թալին, Բաղարան, Ալաման և այլն, ուստի կարող էր էջմիածինն ալ նոյն ձևը ունենալ ի սկզբան, և միւսները հետեւողութիւններ լինէին:

Այս առարկութիւնը կարող էր համոզիչ լինել՝ եթէ վերջիններուն մէջ էջմիածնի բոլոր համաչափութիւններ պահուած գըտնէինք: Մինչդեռ էջմիածինէն զատ միւս բոլոր խաչաձև եկեղեցիները կանոնաւոր ոճի և համաչափութեան մը հպատակած են և էջմիածինը անոնց բունի նմանելու ճիգերը ցոյց կուտայ:


Առանց նոյն իսկ չափելու, պարզ հայեացքով մը կարելի է տեսնել, թէ 7-րդ դարէն սկսեալ գոյութիւն ստացող արտաքուստ յայտնի խաչաձև եկեղեցիները բոլորովին ձևուած են քառակուսի եկեղեցիներու համաչափութեան վրայ, այսինքն դուրս ելած absideները այնչափ լայն են, որչափ որ պիտի լինէին նոյն տարածութեամբ քառակուսի եկեղեցիներու միջին frontonները և նոյն համեմատութեամբ ալ լայնանիստ գմբէթները: Էջմիածնի տաճարին absideներուն լայնութիւնը գրեթէ հաւասար է անոր երկու կողմը մնացած ուղիղ պատերու լայնութեան, ասոր հակառակ միւս բոլոր խաչաձև եկեղեցիներու մէջ մնացորդ ուղիղ պատերը շատ անգամ absideներու կէսին հաւասարելու չափ նեղ են և առանց բացառութեան absideներու կեդրոնին վրայ են գլխաւոր մտից դռները:

Այժմ կարելի եղածին չափ ըննել փորձենք թէ Երբ և ի՞նչ ժամանակի մէջ այս ներքին և արտաքին փոփոխութիւնները կատարուած լինելը հաւանական է:

Որովհետև արևելեան և արևմտեան պատերը զանազան շինութիւններով ծածկուած են, կը մնայ դատել հիւսիսային և հարաւային պատերու վրայ զանազան դարերէ մնացած ճարտարապետական նմոյշներէն:

Հիւսիսային պատի փոքր frontonները իմ կարծիքով պէտք է համարել նոյն իսկ Վահան Մամիկոնեանի շինածը, որովհետև այդ frontonները, ինչպէս քննողներէն Տիւպուա ալ նկատեր է, զուտ հոռմէական ոճի յատուկ է, թէև այսօր բոլորովին մաշուած, սակայն իր յատկութիւնը պարզող մասեր դեռ պահուած են: Այդ fronton-ի corniche-ին վերին եզերքին վրայ իր ոճին յատուկ moulure-ները քանդակուելէն յետոյ անոնց յաջորդած է յառաջակարկառ ճակատը (face de larmier), որուն տակ շարուած են կանոնաւոր համաչափութեամբ modillon-ներ. սոյն modillon-ներուն երկու հատին վերին մասերը բոլորովին անաղարտ են, միայն մաշուած են ներքեկները, որով անյայտ է թէ ունէին արդեօք տակէն ալ նոյն ոճի յատուկ տերևաքանդակները. թէև ա-

աւնց այդ ալ ոչ մի կասկածի տեղի չիկայ դատելով վերի ան-  
վնաս մնացած մասերէն: Այս գծերով corniche բոլոր հայոց յիշա-  
տակարաններուն մէջ միակ երևոյթ է էջմիածնի տաճարին վրայ-  
արևմտեան ոճերով ճոխացած Զուարթնոցի մէջ անգամ այս չափ  
մաքուր հոմէական գծեր չեն տեսնուած: Հետևաբար այս երե-  
ւոյթը երբէք պատահական չէր կարող լինել: Պատմականօրէն



Պատկ. 2. Ս. Հոիփսիմէի տաճարի մա-  
կարդակը:

բացատրելով  
պիտի ըսեմ,  
թէ այդ միակ  
շրջանն էր որ  
հայեր ըստ ա-  
մենայնի արև-  
մուտքի ազդե-  
ցութեան են-  
թարկուած էին  
Բիզանդիոնի  
և արևմուտքի  
զանազան մա-  
սերուն մէջ  
կրթութիւն  
ստացող Մես-  
րոպեան խում-  
բերէն շատե-

րը դեռ կենդանի էին, որոնց մէկն էր Վահան Մամիկոնեանի սի-  
րելի Ղազար Փարպեցին և երբեմն խնամակալ նոյն տաճարին.  
բնականաբար, տարօրինակ բան չէր լինէր կարծել, որ նոյն ժա-  
մանակ արևմտեան ճաշակով զարգացած գիտնականներու գոյ-  
ութիւնը կարող էր ուղղակի ազդեցութիւն ունենալ վերաշինուած  
տաճարին ներքին և արտաքին ոճերուն և զարդաքանդակներուն  
վրայ:

Հիւսիսային ճակատի արևելակողման փոքր fronton-ին ան-  
միջապէս ներքեւ եղած պատուհանին պսակը դժբաղդաբար չի  
կարողացայ քննել, բայց ըստ երևոյթին սա ևս անփոփոխ մնա-  
ցած կը կարծեմ: Այս երկու նշաններէն զատ հիւսիսային ճակա-  
տին վրայ ուրիշ բան չէ մնացած, որ եկեղեցիի սկզբնական շինու-  
թեան պատկանի (ի հարկէ բացի որբոց քանդակներէն և արձանա-  
գրութիւնէն, որոնց քննութիւնը ձեռնհասներու կը թողում): \*)

Հարաւային ճակատի վրայ գոցուած դուռը որոշ չափով պա-

\*) Sbu J. Stzygowski յ. գ. եր. 5 ծան. ռուս. թարգմ.

հեր է իր հնութեան դրոշմը: Երբուրբ տաճարի դռներու նման  
իւր կամարին վրայ երբեմն կրեր է եռանկիւնի fronton, որուն  
հետքը դեռ չէ կորած և պարզ նկատելի է լուսանկարի վրայ ևս  
(պատկ. Բ. 7):

Ինձի կը թուի թէ 7-րդ դարու սկիզբը կոմիտաս կաթողի-  
կոս իր կատարած նորոգութեանց ժամանակ ներքին ձևերուն  
մէջ ոչ միայն փոփոխութիւն չի մտցուց և բաւականացաւ միայն  
տանիքն ու գմբէթը քարաշէն կառուցանելով, այլև էջմիածնի տա-  
ճարին նուիրագործուած յատակագիծը յաւերժացընելու համար  
իր նորոգ կառուցած Հոիփսիմէի տաճարն ալ անոր նմանցուց:

Հոիփսիմէի տաճարին յատակագիծը (պատ. 2) որուն նախ-  
նական ձևը անպայման պահուած է, համեմատելով էջմիածնի  
յատակագիծին հետ, կը գտնենք շատ մօտ նմանութիւն իր խաչա-  
ձևով և կողմնակի չորս սենեակներով. նաև նմանութիւն Անիի  
Առաքելոց եկեղեցիի հետ, բացի մէկ երկու փոքրիկ շեղումներէ:

Հոիփսիմէի տաճարին մէջ, առաջին շեղումն այն է որ արե-  
ւելքէն արևմուտք երկայնութիւնը աւելի շեշտուած է. երկրորդը  
կիսաբոլորակ absideներու մէջտեղերը փոքր absideներ ևս աւել-  
ցած են. սակայն այս տարբերութիւնները ընդհանուր յատկու-  
թեան չի փնտսելէն զատ՝ աւելի կը մօտեցնէ վերև բացատրուած  
հայկական եկեղեցիներու առանձնայատուկ ոճին:

94-99 (16-179)

65-66

Կոմիտաս կաթողիկոսէն 20 տարի յետոյ, Ներսէս Շինողն է  
էջմիածնի տաճարին վրայ նորոգութիւններ կամ շինութիւններ  
կատարող, բայց թէ ինչ էին Ներսէսի շինածները կամ կատարած  
նորոգութիւնները, որոշ տեղեկութիւններ չկան:

Որովհետև Սեբէոսի և Յովհաննէս կաթողիկոսի միջոցաւ  
գիտենք, թէ Կոմիտաս կաթողիկոս մեծ նորոգութիւններ կատա-  
րեց, մանաւանդ կտուրը և գմբէթը բոլորովին նոր շինեց, հե-  
տևաբար, 20 տարուան մէջ տաճարը չէր կարող այնքան մաշուած  
և փաստուած լինել, որ գրեթե կողմանէ վերին աստիճան սակա-  
ւապետ հայ պատմագիրներու համար յիշատակութեան արժանի  
նորոգութիւններ կատարէր Ներսէս Շինող: Բնականաբար նորա-  
նոր յաւելումները պէտք էր լինէին Ներսէս Շինողի գործերը:  
Ժողովոց պատմութեան մէջ \*) արձանագրուած «Երկասիրաբար  
յարդարեալ շինէ զ Ս. Շողակաթն ի Նոր քաղաք» բնորոշ բառե-  
րը ցոյց կուտան թէ Ներսէսի երկասիրութիւն համարուելու չափ  
նոր շինութիւններ և յաւելումներ կատարուեցան անոր ձեռքով:

\*) Շախաթունեան Ստորագրութիւն կաթողիկէ էջմիած-  
նի I. երես 23.



Արդ քանի որ ուրիշ մասեր բոլորովին նոր էին՝ կը մնայ ենթադրել որ այդ յիշատակութիւնը կը պատկանի ներքուստ սենեակները և absideները քանդուելուն և արտաքուստ նոր absideներ աւելցուելուն: Այս գործողութիւնն ալ արդէն ըստ բաւականի յիշատակութեան արժանի աշխատութիւն կարող է համարուել Ներսէս Շինողի համար:

Պէտք է խոստովանիմ սակայն, որ դատելով Ներսէսի Զուարթնոցի մասին ունեցած ճաշակէն, էջմիածնի վրայ չեմ գտներ այնպիսի մի մնացորդ, որ Զուարթնոցը և կամ Ներսէսի ճաշակը յիշեցընէ. թերևս գտնուին Ներսէսի ուրիշ երկասիրութիւններու վրայ այս կասկածը փարատող նմոյշներ, որոնք տակաւին ինձի չէ յաջողուած տեսնել:


Ներսէս Շինողէն յետոյ էջմիածնի տաճարին ճակատագիրը մթութեան մէջ է մինչև 17-րդ դար, ուստի մնացած մասերուն վրայ եզրակացութիւններ հանելու համար դարձեալ պիտի դիմենք սակաւաթիւ մնացորդ ճարտարապետական հատուկոտորներու:

Absideներու յաւելման ժամանակէն մնացած կայ corniche մը (պատկ. Ա. Բ. 9,9 պատկ. Դ. 3, պատկ. Ժ 1,1,) որով նորակառույց absideները պսակուելէն յետոյ, պատշաճութեան համար շքշապատեր են ամբողջ շէնքը, և շարունակութիւնը արդէն կանգուն պատերու մէջ ազուցանելու համար, ինչպէս կը տեսնուի, պատկ Ա. 10, 10, absideներու cornicheներու 1) հաւասար բարձրութեամբ քանդեր են մէկ կարգ քար, և այդ քանդուածքին մէջ cornicheները տեղաւորելէն յետոյ վրայի դատարկութիւնները լեցուցեր են 2) մանր քարերով: Ահա այս moulureները ունեցող cornicheներ գործածական են հայ ճարտարապետութեան մէջ մինչև 10-րդ դար: Իբրև վերջին նմոյշ կարելի է համարել Առաքելոց եկեղեցիի cornicheները բաւական մօտ նմանութեամբ էջմիածնի cornicheներուն:

Հին եկեղեցիներու վրայ մօտաւոր ձևերը կան Թալինի Ս. Աստուածածնի և Տիկորի տաճարներու վրայ, բայց ասոնց շինութեանց հետ ժամանակակից լինելը կասկածելի է. որովհետև

- 1) Արժէք մանրամասն չափազրել և գծազրել այս cornicheը, սակայն անհնար էր ինձի համար: Երանի թէ նորոգութեան ժամանակ շէնքին վրայէն խնամքով հանուէր և պահուէր:
- 2) Միևնոյն գործողութիւնը կատարուած է Թալինի Ս. Աստուածածնի եկեղեցիի վրայ (Մեսրոպ վարդապետ, էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ, պատկ XXI Ազգ. Հանդէս գ. XVI) բայց այնտեղ բաւականացած են միայն abside-ը պսակելով, առանց շարունակելու կողմնակի պատերուն վրայ:

7-րդ դարէն մեզ հասած cornicheներու սովորական ընդհանրացած ձևերը պարզ ատամնաշարեր են վերևից լարերով կամ ժապաւէններով պսակուած, որպիսիքն են Երերուքի, Մաստարայի, Բազարանի, Թալինի և Մրենի եկեղեցիներու cornicheները: Վերջապէս էջմիածնի տաճարին մէջտեղէն շքշապատուած cornicheները 7-դ էն 10-րդ դարաշրջաններու գործ են, և թերևս աւելի մօտիկ 10-դ դարին:



Պատկ. Է. Էջմիածնի տաճարի սկզբնական տեսքը հիւսիս-արեւմուտքից

Գաղափարական perspective գծուած է. պատկերը, որ ըստ իմ ենթադրութեան էջմիածնի հին ձևն է, միջին corniche-ը չեմ դրած, որովհետև հայ ճարտարապետութեան ամբողջ տեղութեան շրջանին մէջ երբէք չէ ընդունուած շէնքին կէս բարձրութենէն corniche-ով շքշապատելու ոճը, ինչպէս տեսանք էջմիածնի մէջ ալ absideներու յաւելման ժամանակ պատշաճութեան համար ապամայ դրուած են անոնք:

Հիւսիսային abside-ի պատուհանի պսակը, որ միաժամանակ absideի հետ շինուած կերևի, դարձեալ յատուկ է 10-դ դարէն առաջ եղած ձևերու, որովհետև, երբ 10-ր դարէն սկսեալ հարթ երեսի վրայ մանուածոյ քանդակազարդ շրջանակներու և պսակներու գործածութիւնները սկսուեցան, այլևս շատ ցանցառ կերպով կերևնան moulureներով պատուհաններու շրջանակներ և պսակներ:

Դռներու և պատուհաններու մասին առանձին տեսութիւն չեմ կարող ընել, առ այժմ անոնց վրայ մանրամասն քննութիւններ կատարելու հնարաւորութիւն չունենալուս համար, միայն թէ մտից դռները շատ քիչ չափով իրենց տեղէն խախտած կերևին:

Յատակազօծի և շրջապատի մասին տեսութիւններս սահմանափակելով հարկ կը տեսնեմ քիչ մ'ալ զբաղիլ ծածքի կամ տանիքի կրած փոփոխութիւններով:

Ինչպէս կերևի էջմիածնի տաճարը երեք տեսակ ձևափոխութիւններէ անցեր է մինչև մեզի հասնելը, առաջին ձևը տեւեր է 5-րդ էն մինչև 7-դ դար. երկրորդը մինչև 17-դ դար, իսկ երրորդը մեր օրերուն տեսնուածը:

Առաջին ձևին համար ինչոր հաւանական էր, կը ներկայացնէ պատկ. է. գծագրութիւնը, որուն վրայ կը տեսնուի իւրաքանչիւր ճակատի կողմնակի կտուրները պսակուած փոքր frontonներով, ասոնց մէջ տեղ աւելի բարձր մեծ frontonներ՝ որոնց վրայի ծածքը հիւսիսէն հարաւ, արևելքէն արևմուտք ձգուելով և զիրար խաչաձևելով միջին մասին վրայ տուեր են կեդրոնական գմբէթի խարխախը:

Կողմնակի փոքր frontonները և անոնց զրաւած մասին ծածքերու ձևերը մանրանկար են ընդհանուր շէնքի մեծ ծածքին: Հիւսիսային և հարաւային կողմէն արդէն այժմ ալ գոյութիւն ունին frontonներ և բնականաբար նոյն թեքութեամբ ալ ծածկուած էին կտուրները. իսկ արևելեան և արևմտեան կողմերուն վրայ թէ frontonներու և թէ խաչաձևուած տանիքի գոյութիւնը ընդունելուս ապացոյցներ չեն պակսեր. բացի թէօրիի վրայ հիմնուած պատճառներէ՝ կայ մի դրական պատճառ ևս: Արևմտեան ճակատի վրայ նոյն փոքր frontonներու համապատասխան մասերու մէջ դեռ կան հին քարերու շարուածքներ, որոնք միջին կէտին վրայ կը հասնեն հիւսիսային ճակատի փոքր frontonներու բարձրութեան, ուր եղեր են նաև ի հնումն փոքր պատուհաններ. (պատկ. է. 1, Ը. 1, Թ. 1). վերջին ժամանակներ երբ ծածքի տեսակը փոխեր են, այն ժամանակ ազատ տեղի պատճառով նոյն

պատուհաններու շրջանակները մեծցուցեր են, թէև յետոյ ալ բոլորովին փակեր են:

Չորս փոքր գմբէթները ցոյց եմ տուած առանց ունէ՝ դրական ապացոյցի, հետևեր եմ միմիայն Անիի Առաքելոց եկեղեցիին, որուն վրայ այժմ ալ դեռ կը ֆնան նոյն մասերու վրայ փոքր



Պատկ. Ը. Էջմիածնի տաճարի տեսքը հարաւ-արեւմուտքից:

գմբէթներու ֆնացորդները: Այս գմբէթները հին էջմիածնի վրայ ցոյց տալ թոյլ տուի ինձի այն պարզ պատճառով, որ երբ ուրիշ մասերու մէջ ըստ ամենայնի նման են այս երկու տաճարները, չէր կարող այդ փոքրիկ տարբերութիւնն ալ ունենալ: Հին աւան-

դուրեան մը շարունակութիւնը չէ՞ արդեօք այսօրուան էջմիածնի վրայ հինգ գմբէթներու գոյութիւնը, թէև տեղափոխուած:

Երկրորդ ձևի համար գծուած է պատկ Ժ. որուն վրայ ցոյց տուած եմ այժմեան յատակագծէն մաս մը բաղդատութեան հա-



Պատկ. Թ. Տաճարի արեւմտեան պատի հիւսիսային մասը:


մար. facade ին վրայ կէտաշար կը տեսնուին նախկին փոքր frontonները, որոնց վրայ յետոյ պատի հիւսուած քը շարունակուելով վերածուեր են թեք տանիքներու. այս փոփոխութիւննանշուշտ բնական հետեանքէրնակին բարդ ձևով շինուած տանիքներու պատճառած անտեղութեանց, որոնց վրայ գտնուած թեքումներ, անկիւններ և խորշեր անձրևի ջուրերուն ուղիղ ընթացքը կարգելին և վնասա-

կար հետեանքներու պատճառ կը դառնային:


Միջին frontonները աւելի նեղցած են ներքին փոփոխութեանէն գմբէթակիր սիւներու ստացած նոր դասաւորութեան համաչափութեամբ. adsideները դուրս ինկած և վրաները ծածկուած են կոնաձև տանիքներով: Սոյն պատկ. է. ի վրայ երևցածներէն դուրս ինչ որ կերկին այսօրուան տաճարին վրայ, ամենն ալ կը վերաբերին երրորդ ձևափոխութեան, որ կսկսի 17-դ դարէն յետոյ, որուն մասին խօսել իմ նպատակէս դուրս է:

էջմիածնի տաճարին նախնական ձևերուն վրայ համառօտ տեսութիւնս վերջացած համարելով հարկ կը համարիմ աւելցընել

նակ մի կենդանի վկայութիւն, որն որ իմ կարծիքներէս մէկ մասը հաստատելու բնոյթը ունի, թէև չեմ պահանջեր որ անպատճառ վաւերական փաստ համարուի սոյն վկայութիւնը, այ-



ՊԱՏ. ԲԱՍՏ ՊԵՏԱ



Պատկ. Ժ. էջմիածնի տաճարի հին տեսքը՝ հիւսիս-արեւելքից եւ նրա abside-ի մասի մակարդակը:

նուամենայնիւ գէթ մղում կուտայ մանրակրկիտ հետախուզութեան, երբ վերանորոգութեան համար կսկսին քանդել տաճարի պատերը:

Այս անգամ էջմիածին գտնուած միջոցիս հիւր եղայ Արժ. Գարեգին վարդապետ Յովսէփեանի. մեկնելէս երկու օր առաջ հ. Գարեգին յայտնեց ինձ որ Սուքիաս սրբազանը տեսնելով աշխատանքս իր սենեակի պատուհանէն, հետաքրքրուած հարցուցեր է նպատակիս մասին: Երբ հ. Գարեգին կը պարզէ տեսութիւնս, այն ատեն Սուքիաս սրբազան կը պատասխանէ թէ այդ կարծիքը միանգամայն իրականութիւն է, որովհետեւ ինքը լսած է այդ մասին Մակար կաթողիկոսէն և վերջինիս ալ պատմած է եղեր փաստին ակնատես Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը:

Այս անակնկալ յայտնութենէն յետոյ ես անձամբ դիմեցի Սուքիաս սրբազանին հ. Գարեգինի ընկերակցութեամբ, ուզելով անձամբ իր բերնէն լսել Նա պատմեց ինձ հետեեալ կերպով. 1):

«Ես անձամբ չեմ տեսած, ինձի պատմեր է Մակար կաթողիկոսը, որն որ ժամանակակից էր Ներսէս կաթողիկոսին: Ահաւասիկ Ներսէս կաթողիկոսի յայտնութիւնը. «Ռուս-պարսկական պատերազմին եկեղեցին երկար ժամանակ իբրև բերդ ծառայեր է, այդ պատճառով ալ ռուս զինուորներ գիշեր ցերեկ մնալով տանիքներու վրայ միշտ կրակ վառեր են այնտեղ, որ քարերուն այրուելուն և փճանալուն պատճառ եղեր է: Քարերու փճացումին բնական հետևանքով սկսեր է տեղացող անձրևներու ժամանակ ջուրը ներս՝ տաճարին մէջ վազել, ուստի կըսէ Ներսէս կաթողիկոս—բոլոր տանիքները քանդեցի և վերստին նորոգեցի, սոյն նորոգութեան միջոցին մեծ զարմանքով տեսայ որ մինչև այսօր մեր ի սկզբանէ անտի խաչաձև կարծած տաճարը քառակուսի է եղած առաջուց, դուրս ելած խորանները յետոյ աւելցուած լինելուն, խիստ պարզ նշաններ երևցան, խորաններուն հին պատին կպցուած մասերուն մէջ դատարկութիւններ կային, որոնց մէկուն մէջէն ալ գտնուեցան մի փղոսկրեայ գաւազան և ուրիշ մի քանի եկեղեցական առարկաներ:

1) Բնականաբար չեմ կարող սրբազանին իր բառերով գրել, սակայն իմաստը բոլորովին անփոփոխ կը պահեմ:

77

1  
3

W.T.